**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 օգոստոսի 2016թ. թիվ 248-Ա

ԱԴԻԿՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111 հոդվածի 1-ին կետի և 130 հոդվածի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Անահիտ Ադիկյանին 2016թ. օգոստոսի 5-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Օձունի Հովհաննես Օձնեցու անվան N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2011 թվականի օգոստոսի 4-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Օձունի Հովհաննես Օձնեցու անվան N 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով Անահիտ Ադիկյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. օգոստոսի 1
ք.Վանաձոր